

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՈՎ

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2023թ.

Բովանդակություն

	Էջ
Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	6
Ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն	7
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	9
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

20.06.2024թ.

N 022411

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Բեյքեր Թիլլի Արմենիա ՓԲԸ
Գլխավոր տնօրեն

Վ. Գևորգյան



ԱՆՎԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱՎԱՑՈՒԹՅՈՒՆ

«Երևանի պետական համալսարան» Հիմնադրամի
Հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «Երևանի պետական համալսարան» Հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, հաշվապահական քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Մեր կարծիքով՝ կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՄԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՄԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

ADVISORY • ASSURANCE • ACCOUNTING • TAX

Baker Tilly Armenia CJSC is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities.

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-երի համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հիմնադրամի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ- ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացվող աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:

- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

ADVISORY • ASSURANCE • ACCOUNTING • TAX

Baker Tilly Armenia CJSC is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities.

▪ Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

▪ Եզրահանգում ենք անում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք արդյո՞ք առկա է ղեպքերի կամ իրավիճակների առնչությամբ էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա ղեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

▪ Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու ղեպքերի ճշմարիտ ներկայացումը:

▪ Ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Հիմնադրամի ֆինանսական տեղեկատվության կամ գործունեության վերաբերյալ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք Հիմնադրամի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Ի թիվս այլ հարցերի, կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդակից ենք դարձնում աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակին ու ժամկետներին, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերին՝ ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունները:

Աուդիտոր

Շ. Թաշիյան



20.06.2024թ.

ADVISORY • ASSURANCE • ACCOUNTING • TAX


Baker Tilly Armenia CJSC is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՍԱՄԻՆ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծանոթագրություն	2023թ.	(հազար դրամ) 2022թ.
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	69,927,892	69,358,520
Ոչ նյութական ակտիվներ	5	17,995	15,976
Ներդրումային արժեթղթեր		6,000	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		69,951,887	69,374,496
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	6	195,917	177,505
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	1,362,574	1,182,885
Տեղաբաշխված ավանդներ		961,445	1,306,375
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8	9,828,881	9,215,855
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		12,348,817	11,882,620
Ընդամենը ակտիվներ		82,300,704	81,257,116
Պարտավորություններ և զուտ ակտիվներ			
Զուտ ակտիվներ		62,313,768	62,218,214
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված եկամուտ	9	5,085,434	4,761,991
Հետաձգված հարկային պարտավորություններ	10	11,219,799	11,037,396
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		16,305,233	15,799,387
Ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված եկամուտ	9	1,451,236	841,635
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	1,752,882	1,941,757
Պահուստներ	12	395,856	350,937
Շահութահարկի գծով պարտավորություններ		81,729	105,186
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		3,681,703	3,239,515
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ		82,300,704	81,257,116


 Հովհաննես Հովհաննիսյան
 Ռեկտոր
 20.06.2024թ.




 Ռաֆիկ Գրիգորյան
 Գլխավոր հաշվապահ

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐՁՑՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	Ծանոթագրություն	2023թ.	2022թ.
Ուսման վարձերից եկամուտ	13	7,382,671	6,619,570
Եկամուտ շնորհներից	13	4,910,222	4,807,311
Այլ եկամուտ	13	535,917	351,054
		12,828,810	11,777,935
Աշխատակիցներին հատուցումներ		(9,312,817)	(8,587,176)
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր		(329,628)	(125,294)
Մաշվածություն և ամորտիզացիա		(1,296,265)	(1,249,239)
Հեռահաղորդակցության ծախսեր		(18,642)	(15,183)
Ապահովագրական ծախսեր		(162,225)	(163,118)
Կրթաթոշակի գծով ծախսեր		(266,140)	(262,319)
Գրասենյակային ծախսեր	14	(1,130,685)	(1,150,487)
Արժեզրկման կորուստ		(716,431)	(13,426)
Այլ ծախսեր		(151,871)	(401,975)
Այլ եկամուտ		289,556	436,455
Գործառնական գործունեությունից արդյունք		(266,338)	246,173
Ֆինանսական եկամուտ	15	854,128	850,514
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)		9,115	(124,148)
Արդյունք մինչև հարկումը		596,905	972,539
Շահութահարկի գծով ծախս	16	(501,351)	(191,834)
Տարվա զուտ արդյունք		95,554	780,705
Այլ համապարփակ արդյունք			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը համապարփակ արդյունք		95,554	780,705

**ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

(հազար դրամ)

	Վերագնահատման պահուստ	Պահուստային կապիտալ	Կուտակված արդյունք	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2022թ.	18,244,929	169,894	43,022,686	61,437,509
Տարվա արդյունք	-	-	780,705	780,705
Հիմնական միջոցների մաշվածությունից պահուստի ճշգրտում	(693,499)	-	693,499	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	17,551,430	169,894	44,496,890	62,218,214
Տարվա արդյունք	-	-	95,554	95,554
Հիմնական միջոցների մաշվածությունից պահուստի ճշգրտում	(2,158,748)	-	2,158,748	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	15,392,682	169,894	46,751,192	62,313,768

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2023թ.	(հազար դրամ) 2022թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա արդյունք	95,554	780,705
Ճշգրտումներ		
Մաշվածության և ամորտիզացիայի	1,296,265	1,249,239
Հիմնական միջոցների դուրսգրումից վնաս	210,395	22,801
Շահութահարկի գծով ծախս	501,351	191,834
Շնորհներից եկամուտ	(4,910,222)	(4,807,311)
Ֆինանսական եկամուտ	(854,128)	(850,514)
Արժեզրկման կորուստ	716,431	13,426
Ընթացիկ պահուստների փոփոխություն	44,919	72,674
Փոխարժեքային տարբերությունից վնաս	(9,115)	124,148
Գործառնական արդյունք նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	(2,908,550)	(3,202,998)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի (աճ)/նվազում	(896,120)	(112,341)
Պաշարների (աճ)/նվազում	(18,412)	(67,276)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր աճ/(նվազում)	(188,875)	(112,639)
Գործառնական գործունեության համար օգտագործված դրամական միջոցներ	(4,011,957)	(3,495,254)
Վճարված շահութահարկ	(350,405)	(287,000)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների գուտ հոսքեր	(4,362,362)	(3,782,254)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(1,921,161)	(1,078,322)
Տեղաբաշխված ավանդներ	961,445	7,693,402
Ստացված տոկոսներ	821,588	820,489
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների գուտ հոսքեր	(138,128)	7,435,569
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շնորհներից մուտքեր	5,103,971	4,970,766
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների գուտ հոսքեր	5,103,971	4,970,766
Դրամարկղում և բանկերում մնացորդների գուտ (նվազում)/աճ	603,481	8,624,081
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների վրա	9,515	(124,148)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	9,215,885	715,922
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	9,828,881	9,215,855

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

«Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Հիմնադրամ կամ Կազմակերպություն) հիմնադրվել է 2002թ.-ին: 2014թ. նոյեմբերին ՀՀ կառավարության որոշմամբ վերակազմակերպվել է հիմնադրամի: «Երևանի պետական համալսարան» հիմնադրամը «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (պետական գրանցման համարը՝ 273.210.03130) իրավահաջորդն է (փոխանցման ակտին համապատասխան):

Հիմնադրամի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս ՀՀ կառավարության: Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող պետական կառավարման լիազոր մարմինը ՀՀ կրթության և գիտության նախարարությունն է:

Հիմնադրամը հաշվետու ամսաթվի դրությամբ ունի

ա) երեք դուստր ընկերություն՝

- «ԵՊՀ» հրատարակչություն ՍՊԸ,
- «ԵՊՀ երկրաբանական հետազոտությունների կենտրոն» ՍՊԸ, և
- «ԵՊՀ ուսանողական ծառայություններ» ՍՊԸ (գրանցվել է 14.03.2016թ.):

Հիմնադրամը չունի ասոցիացված կազմակերպություններ և համատեղ վերահսկվող միավորներ:

Հիմնադրամի գործունեության հիմնական տեսակները՝

- բարձրագույն, միջին, հետբուհական մասնագիտական, հանրակրթական և լրացուցիչ կրթության կազմակերպում,
- օտարերկրյա դիմորդների նախապատրաստական կրթության կազմակերպում, մշակույթի բնագավառում կրթական գործունեության իրականացում,
- գիտամանկավարժական կադրերի պատրաստում, վերապատրաստում, որակավորման բարձրացում,
- գիտահետազոտական, գիտատեխնիկական, արտադրական աշխատանքների իրականացում, դրանց արդյունքների առևտրայնացում,
- խորհրդատվական, փորձագիտական ծառայությունների մատուցում,
- հրատարակչական, տպագրական գործունեության ծավալում և դրա արդյունքների իրացում, գրքերի և այլ տպագիր և էլեկտրոնային միջոցներով գովազդի իրականացում,
- կրթական և ուսումնական վճարովի դասընթացների կազմակերպում,
- միջազգային ուսումնական և գիտատեխնիկական ծրագրերի իրականացում,
- աշխատողների, սովորողների և այլ անձանց հանրային սննդի, հանգստի, բուժման, կենցաղի կազմակերպում և սպասարկում:

Աշխատակիցների միջին ցուցակային թվաքանակը 2023թ. կազմել է 2777... անձ (2022թ.՝ 2,785 անձ):

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամում սովորում են թվով 12776 ուսանող, որոնցից 1167 Իջևանի մասնաճյուղում:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամում սովորել են թվով 13,819 ուսանող, որոնցից 1,150 Իջևանի մասնաճյուղում:

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 1: Կազմակերպությունը, բացի Ալեք Մանուկյան 1 հասցեից, գործունեություն է իրականացնում նաև Աբովյան 52 (թիվ 6 և 8 մասնաշենքեր), Կիևյան 1/ա (Քաղ. պաշտպանության մասնաշենք) հասցեներում, ինչպես նաև ք. Իջևանում (մ/ճ), Ծաղկաձորի, Հանքավանի, Բյուրականի ուսումնական բազաներում և Դիլիջանում (ճամբար):

1.1 Կառավարման համակարգ

Հիմնադրամի կառավարումը հիմնված է իր ինքնավարության վրա՝ միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ, հիմնադրի, լիազոր մարմնի, հոգաբարձուների խորհրդի, գիտական և ռեկտորի գործառնությունների իրականացմամբ:

Հիմնադրամի կառավարման մարմիններն են՝

- 1) հոգաբարձուների խորհուրդը
- 2) կառավարիչը (այսուհետ՝ ռեկտոր):

Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը հոգաբարձուների խորհուրդն է, որի լիազորությունների ժամկետը 5 տարի է: Հոգաբարձուների խորհուրդը ձևավորում է ԵՊԸ-ի պրոֆեսորադասախոսական կազմի, սովորողների, հիմնադրի և լիազոր մարմնի ներկայացուցիչներից: ԵՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի անդամների թիվը 20 է.

- 5-ը՝ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ,
- 5-ը՝ սովորողների ներկայացուցիչներ,
- 5-ը՝ հիմնադրի ներկայացուցիչներ են՝ առաջադրված ՀՀ վարչապետի կողմից պետական պաշտոն զբաղեցնող անձանցից,
- 5-ը՝ լիազոր մարմնի ներկայացուցիչներ են կրթության, գիտության, մշակույթի և տնտեսության տարբեր ոլորտներից:

Հիմնադրամի կառուցվածքային ստորաբաժանումներն են ֆակուլտետները, գիտահետազոտական և կրթական ինստիտուտները, մասնաճյուղերը, ամբիոնները, կենտրոնները, բաժինները, լաբորատորիաները, գիտական գրադարանը, հրատարակչությունը և այլ ստորաբաժանումներ:

Հիմնադրամի կառուցվածքային ստորաբաժանումների կարգավիճակը, գործառնությունները, իրավասությունները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, Հիմնադրամի կանոնադրությամբ և իրենց կանոնադրություններով:

2. ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

2.1 Համապատասխանություն

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Համախմբված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

Ներկայումս ՖՀՄՍ չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ չի տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպությաններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) «Համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»:

Հիմնադրամի ղեկավարությունը որդեգրել է «գուտ ակտիվների» հիմունքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման մոտեցումը: Զուտ ակտիվը Հիմնադրամի ակտիվների և պարտավորությունների տարբերությունն է, այն ներառում է Հիմնադրամի կուտակված արդյունքը:

2.2 Ճանաչման հիմքեր

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, դեկլարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Հիմնադրամի համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Հիմնադրամի դեկլարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Չնայած ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են դեկլարության կողմից ներկա ցուցանիշների վերաբերյալ տեղեկացված լինելու վրա, այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, հազվադեպ են համապատասխանում իրական արդյունքներին: Հետևաբար, կատարված ենթադրությունները և դատողությունները համապատասխանաբար կճշգրտվեն այն տարում, որում պայմանները կփոխվեն:

2.5 Ընկերության կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել:

Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը: Դեկլարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Ընկերության կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Դեկլարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

- Պարտավորությունների դասակարգում որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ),
- Վարձակալության գծով պարտավորություն վաճառքի և հետադարձ վարձակալության դեպքում (ՖՀՄՍ 16-ի Փոփոխություններ),
- Մատակարարների ֆինանսական պայմանավորվածություններ (ՀՀՄՍ 7-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ)
- Ոչ ընթացիկ պարտավորություններ՝ պայմանագրային պարտավորվածություններով (ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ)
- Փոխանակելիության բացակայություն (ՀՀՄՍ 21-ի փոփոխություններ):

3. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՆՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը, 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 404.79 ՀՀ դրամ, 1 Եվրոն՝ 447.9 ՀՀ դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 420.06 ՀՀ դրամ, 1 Եվրոն՝ 393.57 ՀՀ դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը), բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի

արդյունքում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են ժամանակաշրջանի արդյունքում, բացառությամբ այն ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող արդյունքը ճանաչվում է ուղղակիորեն գուտ ակտիվներում: Նման ոչ դրամային հոդվածների դեպքում արդյունքի ցանկացած փոխարժեքային բաղադրիչ նույնպես ճանաչվում է ուղղակիորեն գուտ ակտիվներում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	40-80 տարի
Փոխանցող հարմարանքներ	5-12 տարի
Վագոններ և տրանսպորտային միջոցներ	8-25 տարի
Մեքենասարքավորումներ և տրանսպորտային միջոցներ	3-15 տարի
Այլ	5-15 տարի

3.3 Վարձակալված ակտիվներ

Հիմնադրամը նախ և առաջ գնահատում է, արդյոք պայմանագիրը հանդիսանում կամ պարունակում է վարձակալություն: Այսինքն, եթե պայմանագրով իդենտիֆիկացվող ակտիվի դիմաց:

Հիմնադրամը որպես վարձակալ

Հիմնադրամը կիրառում է միանման մոտեցում բոլոր վարձակալությունների համար, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալության: Հիմնադրամը ճանաչում է պարտավորություն վարձակալության վճարները՝ Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով, որպեսզի վճարի վարձավճարները և Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները, որը իրենից ներկայացնում է տվյալ ակտիվի օգտագործման իրավունքը:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Հիմնադրամը օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ճանաչում է վարձակալության սկզբում (այսինքն՝ այն ամսաթվով, երբ տվյալ ակտիվը մատչելի է օգտագործման համար):

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները, և ճշգրտվում են կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով պարտավորության վերաչափումից: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների սկզբնական արժեքը ներառում է պարտավորություններում ճանաչված կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով արժեքը, առաջացող սկզբնական ուղղակի ծախսումները և վարձավճարները, որոնք կատարվել են մինչև վարձակալությունը սկսելու ամսաթիվը կամ այդ ամսաթվին կատարված վարձավճարները, հանած վարձակալության գծով ստացված արտոնություններ կամ գեղչեր:

Այն դեպքում, երբ վարձակալած ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության պայմանագրի ավարտին՝ վերջում, անցնում է Հիմնադրամին կամ սկզբնական արժեքը արտացոլում է տվյալ վարձակալած ակտիվի գնահատված օգտակար ծառայության ժամկետով: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները նույնպես պետք է արժեզրկման ստուգման (թեստ) ենթարկվեն:

Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով

Վարձակալության սկսման պահին, Հիմնադրամը կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով չափում է վարձակալության ժամանակահատվածի ընթացքում կատարված կամ կատարվելիք վարձավճարների իրական արժեքով: Վարձավճարները ներառում են՝ հաստատուն՝ ֆիքսված վճարները (ներառյալ հաստատուն վճարումները), հանած վարձակալության հետ կապված ցանկացած ստացվելիք խրախուսումներ, վարձակալության փոփոխումն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, և որոնք սկզբնապես չափվել են՝ կիրառելով՝ մեկնարկի ամսաթվին գործող ինդեքսը կամ դրույքը և գումարները, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն վարձակալի կողմից՝ մնացորդային արժեքի երաշխիքի ներքո: Վարձակալության վճարները ներառում են նաև գնման օպցիոնի իրագործման գինը, եթե վարձակալը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքների վճարումները, եթե վարձակալության ժամկետն արտացոլում է վարձակալի՝ վարձակալությունը դադարեցնելու օպցիոնի իրագործումը:

Փոփոխումն վարձավճարները, որոնք կախված չեն որևէ ինդեքսից կամ տոկոսադրույքներից (ներառում են, օրինակ՝ վճարումներ՝ կապված սպառողական գների ինդեքսից, վճարումներ՝ կապված ուղենշային տոկոսադրույքից (ինչպես օրինակ՝ LIBOR-ը)), ճանաչվում են ծախս այն ժամանակաշրջանում, որում այդ դեպքերը տեղի են ունեցել:

Վարձավճարների իրական արժեքը հաշվարկելիս, Հիմնադրամը կիրառում է լրացուցիչ փոխառություն տոկոսադրույքը վարձակալության սկզբի ամսաթվի դրությամբ, որովհետև վարձակալության պայմանագրի մեջ ենթադրյալ տոկոսադրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել: Վարձակալության սկսելուց հետո կրեդիտորական պարտքերը վարձակալության գծով ավելանում են (աճում են)՝ տոկոսների ավելացումով պայմանավորված, և նվազում են վարձավճարների վճարումով: Բացի դրանից, կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով հողվածի հաշվեկշռային արժեքը վերաչափվում, եթե առկա է ձևափոխություն, փոփոխություն, փոփոխություն վարձակալության ժամանակահատվածում, փոփոխություն վարձավճարում կամ տվյալ ակտիվի ձեռք բերման օպցիոնի գնահատման փոփոխություն:

3.4 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Հիմնադրամի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 10 տարի:

3.5 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք - առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ Հիմնադրամը գնահատում է առկա պաշարների իրացման գուտ արժեքը: Հիմնադրամի ղեկավարությունը կիրառում է դատողություն՝ դրանց իրացման գուտ արժեքը որոշելու հարցում՝ ելնելով այդ պաշարների բնույթից: Թանկարժեք իրերի և այլ նյութական արժեքների գնահատման համար Հիմնադրամը հրավիրում է արտաքին գնահատողների:

Եթե գնահատման արդյունքում պարզվում է, որ պաշարների իրացման գուտ արժեքն ավելի փոքր է, քան դրանց սկզբնական արժեքը, ապա գրանցված տարբերությունը ծախսագրվում է համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

3.6 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների դասակարգում և չափում – անցումային դրույթներ

ՖՀՄՍ 9-ը ներառում է ֆինանսական ակտիվների երեք հիմնական դաս՝ ամորտիզացված արժեքով չափվող, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող և շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: ՖՀՄՍ 9-ով նախատեսված ֆինանսական ակտիվների դասակարգումը որպես կանոն հիմնված է այն բիզնես մոդելի վրա, որի շրջանակներում կառավարվում է ֆինանսական ակտիվը, և դրամական միջոցների հոսքերի պայմանագրով նախատեսված այդ ակտիվին վերաբերող բնութագրերի վրա: ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ այլևս չեն գործում ՀՀՄՍ 39-ով սահմանված մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների, փոխառությունների և դեբիտորական պարտքերի և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների դասերը: ՖՀՄՍ 9-ը մեծամասամբ պահպանում է ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման համար գործող ՀՀՄՍ 39-ի պահանջները:

ՖՀՄՍ 9-ի կիրառումն էական ազդեցություն չի ունեցել ֆինանսական պարտավորություններին վերաբերող Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականության վրա:

Ճանաչում և սկզբնական չափում

Առևտրական դեբիտորական պարտքերի սկզբնական ճանաչումը տեղի է ունենում դրանց առաջացման օրը: Մյուս բոլոր ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում, երբ Հիմնադրամը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Ֆինանսական ակտիվի (եթե այն առևտրական դեբիտորական պարտք չէ, որը չի պարունակում էական ֆինանսավորման բաղկացուցիչ) կամ ֆինանսական պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով՝ գումարած, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող միավորի համար, գործիքի ձեռքբերմանը կամ թողարկմանն ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսումները: Էական ֆինանսավորման բաղադրիչ չպարունակող առևտրական դեբիտորական պարտքի սկզբնական չափումն իրականացվում է գործարքի գնով:

Դասակարգում և հետագա չափում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ պարտքային՝ ներդրումների համար, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ բաժնային ներդրումների համար, կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Հիմնադրամը փոխում է ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը, որի դեպքում բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց վրա ազդում է այդ փոփոխությունը, վերադասակարգվում են բիզնես մոդելի փոփոխությանը հաջորդող առաջին հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրը:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախատեսված չէ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական միջոցների հոսքեր հավաքագրելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացում են դրամական միջոցների հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ:

Առևտրական նպատակներով չպահվող բաժնային գործիքում ներդրման սկզբնական ճանաչման ժամանակ Հիմնադրամը կարող է անդառնալիորեն որոշել ներկայացնել ներդրման իրական արժեքի հետագա փոփոխություններն այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այս ընտրությունը կատարվում է առանձին յուրաքանչյուր ներդրման համար:

Բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք դասակարգված չեն որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող, ինչպես ներկայացված է վերը, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Այս ակտիվները ներառում են բոլոր ածանցյալ ֆինանսական ակտիվները: Սկզբնական ճանաչման պահին Հիմնադրամը կարող է անդառնալիորեն նախատեսել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափման պահանջները, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանա:

Ֆինանսական ակտիվների փոխանցումը երրորդ կողմերին այնպիսի գործարքներում, որոնք չեն բավարարում ապաճանաչման պայմանները, չի դիտարկվում որպես վաճառք այս նպատակի համար, և Հիմնադրամը շարունակում է ճանաչել ակտիվները:

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են առևտրական նպատակների համար կամ կառավարվում են և որոնց ստեղծած արդյունքը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով:

Ֆինանսական ակտիվներ – Գնահատում, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ կապված այլ հիմնական ռիսկերի և ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի), ինչպես նաև շահույթի մարժայի հատուցում:

Գնահատելիս, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, Հիմնադրամը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այստեղ ներառվում է այն գնահատումը, թե արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական միջոցների ժամկետը կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չի բավարարի այդ պայմանը: Այս գնահատումն իրականացնելիս Հիմնադրամը դիտարկում է հետևյալը.

- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական միջոցների գումարը կամ ժամկետները,
- վաղաժամկետ մարման և գործողության ժամկետի երկարաձգման պայմանները:

Վաղաժամկետ մարման պայմանը համապատասխանում է միայն մայր գումարի և տոկոսների վճարում հանդիսանալու չափանիշին, եթե վաղաժամկետ մարման գումարը, ըստ էության, իրենից ներկայացնում է մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների չվճարված գումարները, որոնք կարող են ներառել լրացուցիչ ողջամիտ հատուցում պայմանագրի վաղաժամկետ դադարեցման համար: Բացի այդ, պայմանագրի անվանական արժեքի գեղչով կամ հավելավճարով ձեռքբերված ֆինանսական ակտիվի համար վաղաժամկետ մարում թույլատրող կամ պահանջող պայմանն այն գումարի չափով, որն, ըստ էության, իրենից ներկայացնում է պայմանագրի անվանական արժեքը գումարած հաշվեգրված (սակայն չվճարված) պայմանագրային տոկոսները (կարող են ներառել լրացուցիչ ողջամիտ հատուցում պայմանագրի վաղաժամկետ դադարեցման համար), դիտարկվում է որպես նշված չափանիշին համապատասխանող, եթե վաղաժամկետ մարման պայմանի իրական արժեքն էական չէ սկզբնական ճամանաչման պահին:

Ֆինանսական ակտիվներ – Հետագա չափում, շահույթ և վնաս

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Այս ակտիվները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ամորտիզացված արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորստի չափով: Տոկոսային եկամուտը, փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը և վնասը և արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական պարտավորություններ – Դասակարգում, հետագա չափում, շահույթ և վնաս

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող: Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե այն դասվում է առևտրական նպատակներով պահվող գործիքների դասին, հանդիսանում է ածանցյալ գործիք կամ նախատեսված է որպես այդպիսին սկզբնական ճանաչման պահին: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները չափվում են իրական արժեքով, իսկ դրանց գծով գուտ շահույթը և վնասը, ներառյալ՝ տոկոսային ծախսը, ճանաչվում են շահույթում կամ վնասում: Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Տոկոսային ծախսը և փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը և վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող ցանկացած շահույթ կամ վնաս նույնպես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների փոփոխություն

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոխվում են, Հիմնադրամը գնահատում է, թե արդյոք փոփոխված ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի փոփոխություն»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ՝ իրական արժեքով:

Հիմնադրամն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, թե արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբերվում են փոփոխված կամ փոխարինող ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերից: Հիմնադրամը գնահատում է փոփոխության նշանակալի լինելը քանակական և որակական գործոնների հիման վրա հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Հիմնադրամը կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Հիմնադրամը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է ելնելով հետևյալ որակական գործոններից.

- ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխություն,
- գրավի կամ ապահովվածության այլ միջոցների փոփոխություն:

Եթե ամորտիզացված արժեքով հաշվառվող փոփոխված ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր չեն, փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը: Այս դեպքում, Հիմնադրամը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտումից առաջացող գումարը ճանաչում է որպես փոփոխության գծով շահույթ կամ վնաս՝ շահույթի կամ վնասի կազմում: Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը վերահաշվարկվում է որպես ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով գեղչված, վերանայված կամ փոփոխված պայմանագրային դրամական միջոցների ներկա արժեք: Ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճշգրտում են փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում են փոփոխված ֆինանսական ակտիվի գործողության մնացած ժամկետի ընթացքում:

Ֆինանսական պարտավորություններ

Հիմնադրամն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պայմաններով պարտավորության գծով դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Եթե փոփոխությունը (կամ փոխարինումը) չի հանգեցնում ֆինանսական պարտավորության ապաճանաչմանը, Հիմնադրամը կիրառում է այն հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, համաձայն որի ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է, երբ փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման, այսինքն, Հիմնադրամը ճանաչում է փոփոխության (կամ փոխարինման) արդյունքում առաջացող ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի ճշգրտումը շահույթում կամ վնասում փոփոխության (կամ փոխարինման) ամսաթվի դրությամբ:

Գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունների գծով դրամական միջոցների հոսքերի փոփոխությունները չեն համարվում փոփոխություն, եթե հանդիսանում են գործող պայմանագրային պայմանների արդյունք:

Հիմնադրամն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Հիմնադրամը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- գրավի կամ ապահովվածության այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման պայմանի ավելացում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմանների համաձայն դրամական միջոցների հոսքերի գեղչված ներկա արժեքը, ներառյալ՝ վճարված վճարները (առանց ստացված վճարների)՝ գեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, առնվազն 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության գծով մնացած դրամական միջոցների հոսքերի գեղչված ներկա արժեքից: Եթե պարտքային գործիքների փոխարինումը կամ վերջիններիս պայմանների փոփոխությունը հաշվառվում է որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճանաչվում են որպես մարումից շահույթի կամ վնասի մաս: Եթե փոխարինումը կամ պայմանների փոփոխությունը չի հաշվառվում որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճշգրտում են պարտավորության հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում են փոփոխված պարտավորության գործողության մնացած ժամկետի ընթացքում:

Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Հիմնադրամն ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում, Հիմնադրամը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում վերահսկողությունը ֆինանսական ակտիվի նկատմամբ:

Հիմնադրամն իրականացնում է գործարքներ, որոնց շրջանակներում փոխանցում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվների սեփականության հետ կապված կամ բոլոր, կամ, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Նման դեպքերում փոխանցված ակտիվները չեն ապաճանաչվում:

Ֆինանսական պարտավորություններ

Հիմնադրամն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է: Հիմնադրամը նաև ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորությունից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են, որի դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով:

Ֆինանսական պարտավորության ապաճանաչման ժամանակ մարված հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ՝ փոխանցված ոչ դրամային ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները հաշվանցվում են և ներկայացվում են զուտ գումարով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում միայն այն դեպքում, երբ Հիմնադրամն ունի գումարները հաշվանցելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

3.7 Արժեզրկում

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի գատ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին:

Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվների արժեզրկում

ՖՀՄՍ 9-ը փոխարինում է ՀՀՄՍ 39-ով սահմանված «կրած վնասի» մոդելը «սպասվող պարտքային վնասի» մոդելով: Արժեզրկման նոր մոդելը կիրառելի է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների, պայմանագրային ակտիվների, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային գործիքներում ներդրումների, սակայն ոչ՝ բաժնային գործիքներում ներդրումների համար: ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ պարտքային վնասն ավելի շուտ է ճանաչվում, քան պահանջվում էր ՀՀՄՍ 39-ով:

ՖՀՄՍ 9-ի արժեզրկման մոդելի գործողության ոլորտում գտնվող ակտիվների համար սովորաբար ակնկալվում է, որ արժեզրկումից կորուստները կաճեն և կդառնան առավել փոփոխական: Հիմնադրամը որոշել է, որ ՖՀՄՍ 9-ի արժեզրկման պահանջների կիրառումը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ չի հանգեցնում արժեզրկման գծով լրացուցիչ պահուստի ճանաչմանը:

Հիմնադրամը ճանաչում է սպասվող պարտքային վնասի գծով պահուստ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների համար:

Հիմնադրամը չափում է վնասի գծով պահուստը ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասին հավասար գումարի չափով, բացառությամբ հետևյալ գործիքների, որոնց համար վնասի գծով պահուստը չափվում է 12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնասին հավասար գումարի չափով.

- (i) պարտքային արժեթղթեր, եթե որոշվել է, որ դրանք ունենցած րպարտքային ռիսկի հաշվետու ամսաթվի դրությամբ և
- (ii) այլ պարտքային արժեթղթեր և բանկային հաշիվների մնացորդներ, որոնց գծով պարտքային ռիսկը (օրինակ, ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի ընթացքում պարտականությունների չկատարման ռիսկ) էականորեն չի աճել սկզբնական ճանաչման պահից:

Առևտրական դեբիտորական պարտքերի և պայմանագրային ակտիվների վնասի գծով պահուստը միշտ չափվում է ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասին հավասար գումարի չափով:

Երբ Հիմնադրամը որոշում է, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի էական աճ սկզբնական ճանաչումից հետո և երբ գնահատում է սպասվող պարտքային վնասը, այն դիտարկում է ողջամիտ և հիմնավորված տեղեկատվությունը, որը տեղին է և հասանելի առանց անհարկի ծախսերի կամ ջանքերի: Գնահատումը ներառում է թե՛ քանակական և թե՛ որակական տվյալները, ինչպես նաև Ընկերության նախկին փորձի և պարտքի հիմնավորված գնահատման վրա հիմնված վերլուծությունը և ներառում է հեռանկարի վերաբերյալ տեղեկատվությունը:

Հիմնադրամն ենթադրում է, որ տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի էական աճ, եթե այն ավելի քան 365 օր ժամկետանց է:

Հիմնադրամը համարում է, որ ֆինանսական ակտիվի գծով պարտականությունները չեն կատարվել, եթե՝

- (i) հավանական չէ, որ փոխառուն ամբողջությամբ կկատարի պարտքի հետ կապված իր պարտականությունները, եթե Հիմնադրամը չձեռնարկի այնպիսի գործողություններ, ինչպիսին գրավի իրացումն է (վերջինիս առկայության դեպքում), կամ
- (ii) ֆինանսական ակտիվն ավելի քան 365 օր ժամկետանց է:

Ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է այն սպասվող պարտքային վնասը, որն առաջանում է պարտավորությունների չկատարման բոլոր

հնարավոր դեպքերի արդյունքում ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ամբողջ ժամկետի ընթացքում:

12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է սպասվող պարտքային վնասի այն մասը, որն առաջանում է պարտավորությունների չկատարման այն դեպքերի արդյունքում, որոնք հնարավոր են հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում (կամ ավելի կարճ ժամկետի ընթացքում, եթե գործիքի ակնկալվող գործողության ամբողջ ժամկետը պակաս է 12 ամսից):

Սպասվող պարտքային վնասի գնահատման ժամանակ դիտարկվող առավելագույն ժամկետն իրենից ներկայացնում է առավելագույն պայմանագրային ժամկետը, որի ընթացքում Հիմնադրամն ենթարկվում է պարտքային ռիսկի:

Սպասվող պարտքային վնասի չափում

Սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է պարտքային վնասի հավանականությունից ելնելով կշռված պարտքային վնասի գնահատականը: Պարտքային վնասը չափվում է որպես բոլոր պակասող դրամական միջոցների ներկա արժեք (այսինքն՝ որպես տարբերություն այն դրամական միջոցների հոսքերի միջև, որոնք Հիմնադրամը պետք է ստանա պայմանագրի համաձայն, և որոնք ակնկալվում է ստանալ):

Արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամը գնահատում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային արժեթղթերն արժեզրկված լինելու տեսանկյունից: Ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, եթե տեղի են ունեցել մեկ կամ ավելի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվի գծով գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի վրա:

- Ֆինանսական ակտիվի արժեզրկված լինելու վկայությունը ներառում է հետևյալ դիտարկելի տվյալները.
- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
 - պայմանագրի խախտումը, այդ թվում՝ պարտականությունների չկատարումը կամ վճարման ավելի քան 180 օր ուշացումը,
 - Հիմնադրամի կողմից փոխառության կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որը Հիմնադրամն այլ պայմաններում չէր դիտարկի,
 - փոխառուի հավանական սնանկացումը կամ այլ ֆինանսական վերակազմավորումը կամ
 - արժեթղթի համար գործող շուկայի վերացումը ֆինանսական դժվարությունների պատճառով:

Սպասվող պարտքային վնասի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների վնասի գծով պահուստը նվազեցվում է այդ ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից:

Չուրսգրում

Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում, եթե Հիմնադրամը չունի ողջամիտ հիմքեր ակնկալելու ֆինանսական ակտիվի ամբողջական կամ մասնակի փոխհատուցումը: Հիմնադրամը չի ակնկալում դուրս գրված գումարների էական փոխհատուցում: Այնուամենայնիվ, դուրս գրված ֆինանսական ակտիվները կարող են դեռևս հանդիսանալ կատարողական գործողությունների առարկա՝ հասանելիք գումարների փոխհատուցման հետ կապված Ընկերության ընթացակարգերի հետ համապատասխանությունն ապահովելու համար:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Հիմնադրամն այս ակտիվները դիտարկում է արժեզրկման վկայության առանձին և հավաքական հիմունքներով: Բոլոր առանձին վերցված նշանակալի ակտիվները գնահատվում են արժեզրկման տեսանկյունից՝ առանձին հիմունքով: Արժեզրկման առանձին վկայություն չհայտնաբերելու դեպքում, այս ակտիվները գնահատվում է

հավաքական հիմունքով՝ տեղի ունեցած, սակայն չբացահայտված արժեզրկման վկայություն հայտնաբերելու նպատակով:

Ակտիվները, որոնք առանձին վերցված նշանակալի չեն, գնահատվում են արժեզրկման տեսանկյունից հավաքական հիմունքով՝ խմբավորելով ռիսկի համանման բնութագրերով ակտիվները:

Հավաքական արժեզրկումը գնահատելիս Հիմնադրամը դիտարկում է փոխհատուցման ժամկետների և կրած վնասի գումարի նախորդ ժամանակաշրջանների տեղեկատվությունը և կատարում է ճշգրտում, եթե ընթացիկ տնտեսական և վարկավորման պայմանները թույլ են տալիս, որպեսզի փաստացի վնասն ավել կամ պակաս լիներ նախկինում առկա միտումներով առաջարկվողներից:

Արժեզրկումից կորուստը հաշվարկվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն: Կորստի գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ պահուստային հաշվում: Եթե Հիմնադրամը գտնում է, որ չկա ակտիվը փոխհատուցելու իրատեսական հնարավորություն, համապատասխան գումարները դուրս են գրվում: Եթե հետագայում տեղի ունեցած դեպքը հանգեցնում է արժեզրկումից կորստի գումարի նվազեցմանը և այդ նվազեցումը կարելի է անկողմնակալորեն վերագրել արժեզրկման ճանաչումից հետո տեղի ունեցած դեպքին, ապա արժեզրկումից կորստի գումարի նվազեցումը հակադարձվում է շահույթի կամ վնասի միջոցով:

3.8 Ծնորհներ / նվիրաբերություններ

Ծնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Ծնորհները, որոնց հիմնական պայմանը Հիմնադրամի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ակտիվներին վերաբերող շնորհներ և սխտեմատիկորեն փոխանցվում են համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ շնորհները ճանաչվում են սխտեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները (ծրագրային, վարչական և այլն), որոնց համար դրանք ստացվել են: Ծնորհը, որը հատկացվում է Հիմնադրամին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

Այն ծրագրերի համար ստացված միջոցները, որոնք ուղղակիորեն չեն իրականացվում Հիմնադրամի կողմից, չեն հաշվառվում Հիմնադրամի համախմբված ֆինանսական հաշվետվություններում:

Միևնույն ժամանակ այն ծրագրերը, որոնք համաֆինանսավորվում են Հիմնադրամի կողմից վերահսկվող միջոցների հաշվին, ներառվում են Հիմնադրամի համախմբված ֆինանսական հաշվետվություններում միայն Հիմնադրամի համաֆինանսավորված գումարի չափով, քանի որ մնացած գումարները չեն վերահսկվում Հիմնադրամի կողմից:

3.9 Ծահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի

հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուղվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական արդյունքի, ոչ էլ հարկվող արդյունքի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Հիմնադրամը կստանա բավարար հարկվող արդյունք, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու՝ կախված այն եղանակից, որով Հիմնադրամը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Հիմնադրամը մտադիր է գուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

3.10 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

- (ա) աշխատավարձերը և պարգևավճարները,
- (բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,
- (գ) սոցիալական ապահովության մասհանումները և այլ սոցիալական վճարներ:

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամին մատուցում են ծառայություններ, Հիմնադրամի աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղջված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

- (ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղջված գումարը, Հիմնադրամը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս) այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,
- (բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

- (ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,
- (բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությանը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Հիմնադրամը ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Հիմնադրամը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

3.11 Եկամտի ճանաչում

Հիմնադրամի եկամուտները գոյանում են ստացված շնորհների օգտագործումից, Հիմնադրամի կողմից իրականացվող առևտրային գործունեությունից, ազատ ֆինանսական միջոցների ներդրումից և այլն:

Շնորհներից եկամուտ

Եկամուտը ճանաչվում է, երբ առկա է հիմնավորված հավաստիացում, որ շնորհը ստացվելու է, կամ երբ շնորհը փաստացի ստացվել է, և ստացված շնորհի դիմաց արդեն իսկ կատարվել են համապատասխան ծախսեր: Այս եկամուտը ներառվում է «Շնորհներից եկամուտ» հոդվածում:

Ֆինանսական եկամուտ

Այս եկամուտը ներառում է ներդրված բանկային ավանդներից ստացված եկամուտը և ճանաչվում է՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Այս եկամուտը ներառվում է «Ֆինանսական եկամուտ» հոդվածում:

3.12 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Հիմնադրամը ներդրումները դասակարգում է որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

4. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

	<i>(հազար դրամ)</i>								
	Հոդամասեր	Շենքեր և շինություններ	Կառուցվածքներ	Մեքենաներ, սարքավորումներ և փոխանցող հարմարանքներ	Տրանսպորտային միջոցներ	Տնտեսական գույք և այլն	Թանգարանային գույք	Անավարտ շինարարություն	Ընդամենը
Սկզբնական արժեք									
<i>2022թ. հունվարի 1-ի դրությամբ</i>	<i>14,010,812</i>	<i>60,120,867</i>	<i>345,587</i>	<i>3,303,304</i>	<i>240,671</i>	<i>4,037,374</i>	<i>112,437</i>	<i>1,172</i>	<i>82,172,224</i>
Ավելացումներ	-	14,820	-	393,506	28,000	273,858	-	-	710,184
Կապիտալացում	-	343,343	-	-	-	17,341	-	-	360,684
Ներքին շարժ	-	-	-	522	-	(552)	-	-	-
Օտարումներ/Դուրսգրումներ	-	(37,431)	(480)	(42,632)	(9,238)	(187,423)	(101)	-	(277,305)
<i>2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</i>	<i>14,010,812</i>	<i>60,441,599</i>	<i>345,107</i>	<i>3,654,730</i>	<i>259,433</i>	<i>4,140,598</i>	<i>112,336</i>	<i>1,172</i>	<i>82,965,787</i>
Ավելացումներ	-	526,282	24,021	613,765	65,200	683,134	-	-	1,912,402
Օտարումներ/Դուրսգրումներ	-	-	(1,097)	(49,077)	-	(159,533)	-	-	(209,707)
<i>2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</i>	<i>14,010,812</i>	<i>60,967,881</i>	<i>368,031</i>	<i>4,219,418</i>	<i>324,633</i>	<i>4,664,199</i>	<i>112,336</i>	<i>1,172</i>	<i>84,668,482</i>
Մաշվածություն									
<i>2022թ. հունվարի 1-ի դրությամբ</i>	-	<i>(6,657,939)</i>	<i>(199,101)</i>	<i>(2,299,221)</i>	<i>(129,164)</i>	<i>(3,226,986)</i>	<i>(107,114)</i>	-	<i>(12,619,525)</i>
Տարեկան մաշվածություն	-	(841,967)	(16,625)	(165,702)	(13,801)	(203,611)	(614)	-	(1,242,320)
Ներքին շարժ	-	-	-	(293)	-	293	-	-	-
Օտարումներ/դուրսգրումներ	-	37,431	-	28,864	9,238	178,944	101	-	254,578
<i>2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</i>	-	<i>(7,462,475)</i>	<i>(215,726)</i>	<i>(2,436,352)</i>	<i>(133,727)</i>	<i>(3,251,360)</i>	<i>(107,627)</i>	-	<i>(13,607,267)</i>
Տարեկան մաշվածություն	-	(858,105)	(16,951)	(137,079)	(18,123)	(259,350)	-	-	(1,289,608)
Օտարումներ/Դուրսգրումներ	-	-	-	27,766	-	127,668	851	-	156,285
<i>2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</i>	-	<i>(8,320,580)</i>	<i>(232,677)</i>	<i>(2,545,665)</i>	<i>(151,850)</i>	<i>(3,383,042)</i>	<i>(106,776)</i>	-	<i>(14,740,590)</i>
Ջուտ հաշվեկշռային արժեք									
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	14,010,812	52,979,124	129,381	1,218,378	125,706	889,238	4,709	1,172	69,358,520
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	14,010,812	52,647,301	135,354	1,673,753	172,783	1,281,157	5,560	1,172	69,927,892

Հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամը գրավադրված հիմնական միջոցներ չունի: 2023թ. -ի դեկտեմբերի 31-ի դրությամբ 5,478,662 հազար դրամ սկզբնական արժեքով հիմնական միջոցներ ունեն գրո հաշվեկշռային արժեք (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 5,255,108):

5. ՈՉ ԼՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

	<i>(հազար դրամ)</i>				
	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ	Արտոնագրեր	Այլ ոչ կյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք					
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	29,915	5,590	1,706	52,245	89,456
Ավելացումներ	428	480	-	6,546	7,454
Օտարումներ/Դուրսգրումներ	(24)	(4,270)	(371)	-	(4,665)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	30,319	1,800	1,335	58,791	92,245
Ավելացումներ	1,576	25	-	6,679	8,280
Օտարումներ/Դուրսգրումներ	(189)	(20)	-	-	(209)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	31,706	1,805	1,335	65,470	100,316
Մաշվածություն					
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	(21,905)	(3,723)	(1,524)	(46,789)	(73,941)
Տարեկան մաշվածություն	(3,131)	(717)	(8)	(3,063)	(6,919)
Օտարումներ/դուրսգրումներ	-	4,220	371	-	4,591
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(25,036)	(220)	(1,161)	(49,852)	(76,269)
Տարեկան մաշվածություն	(2,529)	(67)	(7)	(4,095)	(6,698)
Օտարումներ/Դուրսգրումներ	189	20	-	437	646
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(27,376)	(267)	(1,168)	(53,510)	(82,321)
Զուտ հաշվեկշռային արժեք					
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,283	1,580	174	8,939	15,976
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,330	1,538	167	11,960	17,995

6. ՊԱՇԱՐՆԵՐ

	<i>(հազար դրամ)</i>	
	2023թ.	2022թ.
Ապրանքներ	48,507	12,104
Հումք և նյութեր	66,794	85,958
Արտադրանք	22,750	13,797
Շինանյութեր	15,597	18,577
Վառելիք	4,969	5,860
Գրենական պիտույքներ	23,491	24,273
Այլ	13,809	16,936
	195,917	177,505

Գյուղատնտեսական արտադրանքը ստացվում է որպես սեփական գիտափորձնական աշխատանքների արդյունք:

7. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

	<i>(հազար դրամ)</i>	
	2023թ.	2022թ.
Առևտրային դեբիտորական պարտքեր	876,973	974,993
Տրված կանխավճարներ	15,144	652
Դեբիտորական պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով	281,609	25,089
Այլ դեբիտորական պարտքեր	188,848	182,151
	1,362,574	1,182,885

8. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ

	<i>(հազար դրամ)</i>	
	2023թ.	2022թ.
Բանկային հաշիվներ	1,313,321	646,651
Ցպահանջ ավանդներ	8,515,560	8,569,204
	9,828,881	9,215,855

9. ՀԵՏԱԶԳՎԱԾ ԵՎԱՄՈՒՑ

	<i>(հազար դրամ)</i>	
Ոչ ընթացիկ	2023թ.	2022թ.
Հետաձգված եկամուտ ակտիվներին վերաբերող շնորհներից	5,085,434	4,761,991
	5,085,434	4,761,991

	<i>(հազար դրամ)</i>	
Ընթացիկ	2023թ.	2022թ.
Հետաձգված եկամուտ ակտիվներին վերաբերող շնորհներից	1,451,236	841,635
	1,451,236	841,635

10. ՀԵՏԱԶԳՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

	<i>(հազար դրամ)</i>	
	2023թ.	2022թ.
Տարեկազմի մնացորդ	(11,037,396)	(11,124,852)
Տարվա արդյունքում ճանաչված փոխհատուցում	(182,403)	87,456
Տարեվերջի մնացորդ	(11,219,799)	(11,037,396)

2023թ. հետաձգված հարկի գծով կիրառելի դրույքաչափը կազմում է 18% (2022թ.՝ 18%):

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների շարժ.

2023 <i>(հազար դրամ)</i>	1 հունվարի դրությամբ	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի դրությամբ
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Չօգտագործված արձակուրդների գծով պահուստ	-	57,483	57,483
Պաշարներ	20,341	-	20,341
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	20,341	57,483	77,824
<i>Հետաձգված հարկային պարտավորություններ</i>			
Հիմնական միջոցներ	10,994,569	303,054	11,297,623
Չօգտագործված արձակուրդների գծով պահուստ	63,168	(63,168)	-
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություններ	11,057,737	239,886	11,297,623
Զուտ հետաձգված հարկային ակտիվներ/(պարտավորություններ)	(11,037,396)	(182,403)	(11,219,799)

*Երևանի պետական համալսարան» Հիմնադրամ
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
31 դեկտեմբերի 2023թ.*

2022 <i>(հազար դրամ)</i>	1 հունվարի դրությամբ	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի դրությամբ
Հետաձգված հարկային ակտիվներ			
Պաշարներ	20,341	-	20,341
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ	20,341	-	20,341
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Հիմնական միջոցներ	11,095,106	(100,537)	10,994,569
Չօգտագործված արձակուրդների գծով պահուստ	50,087	13,081	63,168
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություններ	11,145,193	(87,456)	11,057,737
Զուտ հետաձգված հարկային ակտիվներ/(պարտավորություններ)	(11,124,852)	87,456	(11,037,396)

11. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

	<i>(հազար դրամ)</i> 2023թ.	2022թ.
Առևտրային կրեդիտորական պարտքեր	180,787	144,729
Ստացված կանխավճարներ ուսման վարձերի գծով	1,530,664	1,702,268
Աշխատավարձի և այլ կարճաժամկետ հատուցումների գծով	18,599	33,289
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	127	40,251
Այլ կրեդիտորական պարտքեր	22,705	21,220
	1,752,882	1,941,757

12. ՊԱՀՈՒՍՏՆԵՐ

	<i>(հազար դրամ)</i>	
	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	Ընթացիկ	Ոչ ընթացիկ
Պահուստներ շարունակական գործառնական ծախսումների գծով	395,856	-
	395,856	350,937

	<i>(հազար դրամ)</i>		
	2023թ. հունվարի 1-ի դրությամբ	Ավելացում	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Չօգտագործված արձակուրդային պահուստ	350,937	44,919	395,856
	350,937	44,919	395,856

	<i>(հազար դրամ)</i>		
	2022թ. հունվարի 1-ի դրությամբ	Ավելացում	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Չօգտագործված արձակուրդային պահուստ	278,263	72,674	350,937
	278,263	72,674	350,937

13. ՀԱՍՈՒՅԹ

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
Ուսման վարձերից	7,382,671	6,619,570
Եկամուտներին վերաբերող շնորհներ	4,910,072	4,807,311
Հյուրերի տան և հանրակացարանային ծառայություններից	216,443	18,818
Լրացուցիչ կրթական դասընթացներից և քննություններից	168,056	283,905
Այլ եկամուտ	151,568	48,331
	12,828,810	11,777,935

14. ԳՐԱՄԵՆՅԱԿԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
Գրասենյակային ծախսեր	174,899	426,158
Կոմունալ ծախսեր	231,424	17,900
Բանկային ծախսեր	2,637	2,607
Սուղիտ և խորհրդատվություն	9,298	3,760
Վարձակալության գծով ծախսեր	3,150	6,298
Թերթեր, ամսագրեր	1,411	10,473
Պրակտիկայի կազմակերպման ծախսեր	21,119	11,240
Այլ ծառայություններ	223,271	142,269
Նորոգում և սպասարկում	39,165	34,133
Նյութածախս	121,404	85,692
Ֆինանսավորումների գծով ծախսեր	268,383	115,912
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	330	180,846
Այլ	34,194	113,199
	1,130,685	1,150,487

15. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏ

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
Ավանդներից տոկոսային եկամուտ	854,128	850,514
Զուտ ֆինանսական եկամուտներ	854,128	850,514

16. ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԾԱԽՍ

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
Ընացիկ շահութահարկ	318,948	279,290
Հետաձգված հարկ	182,403	(87,456)
	501,351	191,834

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

<i>(հազար դրամ)</i>	2023թ. 31 դեկտեմբերի ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2022թ. 31 դեկտեմբերի ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Արդյունք մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՄ)	596,905		972,539	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2022թ.՝ 18%)	107,443	18%	175,057	18%
Հետաձգված հարկ	182,403	31%	(87,456)	(9%)
(Չհարկվող եկամուտ)/ չնվազեցվող ծախսեր, գուտ	211,505	35%	104,233	11%
Շահութահարկի գծով ծախս	501,351	84%	191,834	20%

17. ԿԱՐԵՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ ԵՎ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

Հիմնադրամը իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, հազվադեպ են համապատասխանում իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ՝ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա համախմբված ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

Ղեկավարական պարտքեր՝ շնորհների գծով

Հիմնադրամի գործունեության շրջանակներում կատարված ծախսերի դիմաց ղեկավարության կողմից ակնկալվող ստացվելիք գումարները ճանաչվում են որպես Ծրագրերի իրականացման գծով ղեկավարական պարտքեր՝ շնորհների գծով: Այս գումարը որոշելիս Հիմնադրամի ղեկավարությունը կատարում է ծախսված գումարների փոխհատուցման հնարավորության գնահատում: Գնահատումները կատարելիս ղեկավարությունը հիմնվում է պատմական փորձի, ինչպես նաև նվիրատուի խոստման, ծրագրի իրականացման հնարավորության և այլ հանգամանքների վրա: Եթե փոխհատուցված գումարները տարբերվեն գնահատումներից, ապա համախմբված ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

18. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.6-ում:

Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

	2023թ.	<i>(հազար դրամ)</i> 2022թ.
Ներդրումային արժեթղթեր	6,000	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	876,973	974,993
Տեղաբաշխված ավանդներ	961,445	1,306,375
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	9,828,881	9,215,855
	11,673,299	11,497,223

Ֆինանսական պարտավորություններ

	2023թ.	<i>(հազար դրամ)</i> 2022թ.
<i>Այլ Ֆինանսական պարտավորություններ</i>		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	180,787	144,729
	180,787	144,729

19. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Հիմնադրամը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Հիմնադրամը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժույթային ռիսկի:

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը կարող է կրել ֆինանսական կորուստներ: Այս ռիսկի ազդեցությունը Հիմնադրամի համար առաջանում է տարբեր ֆինանսական գործիքներից, ինչպիսիք են դեբիտորական պարտքերը, ժամկետային ավանդները և այլն: Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

	2023թ.	<i>(հազար դրամ)</i> 2022թ.
Տեղաբաշխված ավանդներ	961,445	1,306,375
Ներդրումային արժեթղթեր	6,000	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	876,973	974,993
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	9,828,881	9,215,855
	11,673,299	11,497,223

Պարտքային ռիսկը բարձր է հատկապես ուսման վարձերի հավաքագրելիության մասով: Դրամական միջոցների և դրանց համարժեքների, ինչպես նաև ժամկետային ավանդների մասով պարտքային ռիսկը բավականին ցածր է, քանի որ դրանք պահվում են հեղինակավոր բանկերում:

զ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, որ Հիմնադրամը ի վիճակի չի լինի մարել իր պարտավորությունները:

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

20. ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

20.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին:

ձեռագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով, ինչպես նաև միջազգային տնտեսական ճգնաժամ:

Հայաստանի Հանրապետության հետ համագործակցող երկրների տնտեսությունների վիճակի վատթարացումը հանգեցրել է արտերկրից դրամային փոխանցումների կրճատմանը, ինչից Հայաստանի տնտեսությունը գտնվում է մեծ կախման մեջ: Հանքահումքային ապրանքների միջազգային գների հետագա անկումը, անորոշությունները՝ պայմանավորված ուղղակի կապիտալ ներդրումների ներգրավման հնարավորություններով, գնաճը, կարող են հանգեցնել Հայաստանի տնտեսության, ինչպես նաև Հիմնադրամի վիճակի վատթարացման: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա դատողություններն ու ենթադրությունները շատ են, դեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Հիմնադրամի ակտիվների և պարտավորությունների մնացորդային արժեքի վրա:

Հիմնադրամի դեկավարությունը գտնում է, որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ՝ Հիմնադրամի տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

20.2 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռևս չեն կիրառվում: Հիմնադրամը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Հիմնադրամի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

20.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է

համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

21. ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԵՎ

Հիմնադրամի կապակցված կողմերը ներառում են հիմնական ղեկավար անձնակազմը և հոգաբարձուների խորհուրդը, ինչպես նկարագրված է ստորև:

	<i>(հազար դրամ)</i>	
	2023թ.	2022թ.
ՀՀ պետական բյուջե	5,436,862	4,900,454
	5,436,862	4,900,454

21.1 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է աշխատակիցներին հատուցումներում:

	<i>(հազար դրամ)</i>	
	2023թ.	2022թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ, ներառյալ սոցիալական ապահովության վճարներ	169,963	105,066
	169,963	105,066